ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«26» մայիս 2015թ. No 1311 - Ա

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԻ ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԱՐԱԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ 02/14.4/5444-15 հանձնարարականի 8-րդ կետի, Համահայկական ամառային վեցերորդ խաղերի ընթացքում խաղերի մասնակիցների և հյուրերի շտապ և անհետաձգելի ու մասնագիտացված բժշկական օգնությունն և սպասարկումը պատշաճ և արագ կազմակերպելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանին (համաձայնությամբ)՝

1) 2015 թվականի օգոստոսի 2-ից 13-ը Երևան քաղաքի վարչական տարածքում Համահայկական ամառային վեցերորդ խաղերի անցկացման մարզակառույցներում, բացման և փակման արարողություններին ապահովել շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահություններ Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության բրիգադների միջոցով, անհրաժեշտության դեպքում ապահովելով մասնագիտացված բժշկական օգնության կարիք ունեցող անձանց տեղափոխումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

2) շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահությունները սահմանել սույն հրամանի Հավելվածում նշված մարզակառույցներում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արա Մինասյանին՝

1) Համահայկական ամառային վեցերորդ խաղերի ընթացքում 2015 թվականի օգոստոսի 2-ից 13-ը բժշկական կենտրոնում առանձնացնել 5 հիվանդասենյակ՝ անհրաժեշտության դեպքում խաղերի մասնակիցների և հյուրերի մասնագիտացված բժշկական օգնությունը կազմակերպելու համար:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Շիրակի, Արարատի, Լոռու, Արմավիրի մարզպետարանների աշխատակազմերի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունների պետերին (համաձայնությամբ)՝

1) Համահայկական ամառային վեցերորդ խաղերի անցկացման մարզակառույցներում ապահովել շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահություններ մարզային բժշկական հաստատությունների շտապ բժշկական օգնության բրիգադների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովել խաղերի մասնակիցների և հյուրերի մասնագիտացված բժշկական օգնությունը հիվանդանոցային պայմաններում համապատասխանաբար՝ «Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, «Վաղարշապատի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունում:

2) շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահությունները սահմանել սույն հրամանի Հավելվածում նշված մարզակառույցներում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի
Մայիսի 26-ի թիվ 1311 - Ա հրամանի

ՄԱՐԶԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Փյունիկ» մարզադաշտ
2. «Հրազդան» կենտրոնական մարզադաշտ
3. ՀՖՖ տեխնիկական կենտրոնի՝ ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտ

ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐ

(ԱԲՈՎՅԱՆ, ԳՅՈՒՄՐԻ)

4. «Աբովյանի քաղաքային մարզադաշտ»
5. «Գյումրիի քաղաքային մարզադաշտ»
6. Շիրակի ֆուտբոլի ակադեմիա

ՖՈՒՏԶԱԼԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐ

(ԵՐԵՎԱՆ)

1. «ԳՐԱՆԴ ՍՊՈՐՏ» մարզահամալիր
2. Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի մարզադահլիճ
3. «Կիլիկիայի» մարզադահլիճ
4. ՀՖՖ տեխնիկական կենտրոնի՝ ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտ

(ԳՅՈՒՄՐԻ)

1. Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԴԱՀԼԻՃՆԵՐ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Միկա» մարզահամալիր
2. «ԳՐԱՆԴ ՍՊՈՐՏ» մարզահամալիր
3. «Դինամո» մարզադահլիճ

ՎՈԼԵՅԲՈԼԻ ԴԱՀԼԻՃՆԵՐ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Խուլ ու համրերի կենտրոն» մարզադահլիճ
2. Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի մարզադահլիճ

ԹԵՆԻՍԻ ԴԱՇՏ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Օրանժ ֆիթնես և թենիս ակումբ»

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ ԴԱՀԼԻՃ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Արաբկիր համայնքի թիվ 4 մարզադպրոց»

ՇԱԽՄԱՏԻ ՏՈՒՆ

(ԵՐԵՎԱՆ)

1. Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն

ԲԱԴՄԻՆԹՈՆԻ ԴԱՀԼԻՃ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Օրանժ ֆիթնես և թենիս ակումբ»

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐ
(ԵՐԵՎԱՆ)

1. Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի լողավազան
2. Արաբկիր համայնքի լողավազան

ԱԹԼԵՏԻԿԱ

(ԱՐՏԱՇԱՏ)

1. Արտաշատ քաղաքի մարզադաշտ

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ԴԱՀԼԻՃ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Նեպտուն» մարզահամալիր

ԾՈՎԱՓՆՅԱ ՎՈԼԵՅԲՈԼ

(ԵՐԵՎԱՆ)

1. «ԳՐԱՆԴ ՍՊՈՐՏ» մարզահամալիր

ԳՈԼՖԻ ԽԱՂԱԴԱՇՏ

(ԵՐԵՎԱՆ)

1. «Վահագնի» բնակելի թաղամաս, «Արարատ Վալլի» քաղաքամերձ ակումբ

ՀԱՆԴԲՈԼԻ ԴԱՀԼԻՃՆԵՐ

(ՎԱՆԱՁՈՐ)

1. «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությա Վանաձորի մասնաճյուղ

ԲԱՁԿԱՄԱՐՏԻ ԴԱՀԼԻՃՆԵՐ

1. «ԳՐԱՆԴ ՍՊՈՐՏ» մարզահամալիր
2. «Խուլ ու համրերի կենտրոնի» մարզադահլիճ
3. «Դինամո» մարզադահլիճ
4. «Միկա» մարզադաշտ

ՀԵԾԱՆՎԱՍՊՈՐՏԻ ՎԱՁՔՈՒՂԻ

(ԵՐԵՎԱՆ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ)

1. Ք. Երևան՝ Հրապարակ, Նալբանդյան, Մաշտոց.....
2. Ք. Վաղարշապատ՝ Ակնալիճ

ՀՐԱՁԳԱՐԱՆ (ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ)

1. Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց